Եկեղեցու Կրթական Համակարգ

ԵԿՀ-ի միսիա. Օգնեք զարգանալ Հիսուս Քրիստոսի աշակերտներին, որոնք պետք է առաջնորդներ դառնան իրենց տներում, Եկեղեցում և համայնքներում:

Իսրայելի հավաքումը.
«Տերը օգտագործում է կրթությունն Իսրայելի մեծ հավաքման համար, որը տեղի է ունենում այսօր Եկեղեցում: Նա պատրաստում է աշխարհին Իր վերադարձին և Եկեղեցու կրթական համակարգն այն բազմաթիվ միջոցներից մեկն է, որը Նա կօգտագործի այդ ջանքերում: Յուրաքանչյուր հաստատություն անում է յուրահատուկ մի բան՝ օրհնելու համաշխարհային Եկեղեցին: Յուրաքանչյուր հաստատություն ունի իր նպատակը և իր հանձնառությունը Եկեղեցու ղեկավարությունից՝ տարբերվել աշխարհից և միմյանցից»:

— Երեց Քլարկ Գ. Գիլբերտ, Եկեղեցու կրթական համակարգի հանձնակատար

ԳՐԱՆՑՎԵՔ՝ յուրաքանչյուր հնարավորության մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար. cesinfo.byu.edu:

ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ այս տարբերակներից մեկին, անցեք apply.ChurchofJesusChrist.org կայք:

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ հաստատություններից յուրաքանչյուրի մասին այս աշխատաթերթի հաջորդ էջում:

BYU BRIGHAM YOUNG UNIVERSITY | BYU IDAHO | BYU HAWAII | BYU PATHWAY WORLDWIDE | ENSIGN COLLEGE | S&I SEMINARIES & INSTITUTES

ԲՐԻԳԱՄ ՅԱՆԳ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Բրիգամ Յանգ Համալսարանի (ԲՅՀ) միսիան է՝ օգնել մարդկանց կատարելության և հավերժական կյանքի իրենց ձգտումներում: ԲՅՀ-ն տրամադրում է ինտենսիվ ուսուցում՝ խթանիչ միջավայրում, որտեղ ակնկալվում է գերազանցության ձգտում և մարդկային ներուժի լիարժեք իրացում: BYU-ը ձգտում է զարգացնել հավատք, բանականություն և բնավորություն ունեցող ուսանողներին, որոնք ունեն հմտություններ և ցանկություն՝ շարունակելու ուսումը և ծառայելու ուրիշներին իրենց ողջ կյանքում:

- BYU-ն տալիս է ոգեշնչող ուսուցման հնարավորություններ, որոնցում համատեղված են հոգևոր ճշմարտությունները, հետազոտական փորձառությունը և գործնական ուսումնասիրությունը բոլոր ուսանողների համար:
- Այն մեկնարկային հարթակ է ասպիրանտուրայի և ապագայում փայլուն գործունեություն ծավալելու համար:
- Այն տրամադրում է NCAA սպորտի ավանդական համալսարանական փորձառություն, ինչպես նաև արվեստի և երաժշտության բնագավառում համաշխարհային մակարդակի փորձառություն:

Իմացեք ավելին cesinfo.byu.edu կայքում:

ԲՅՀ–IDAHO

ԲՅՀ–Idaho-ն ամրացնում է Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին վկայությունները և խթանում է դրա սկզբունքներն առողջ ակադեմիական, մշակութային և սոցիալական միջավայրում: Դասերի նպատակն է՝ առաջարկել իրական փորձառություն՝ նախապատրաստելու տարբեր հետաքրքրություններով և կարողություններով օժտված ուսանողներին ուսման և աշխատանքի համար: ԲՅՀ–Idaho-ն որքան հնարավոր է շատ ուսանողների ձգտում է տրամադրել բարձրորակ կրթություն՝ ցածր գնով:

- Կրթական աստիճաններն առաջարկվում են ավելի քան 100 մասնագիտություններով:
- Դասախոսները պրոֆեսիոնալներ են իրենց համապատասխան ոլորտներում և ուսանողներին կրթելն ու նրանց համար ուսուցիչ լինելը համարում են իրենց առաջնահերթությունը:
- Դասարանում սովորող ուսանողների միջին թիվը 30 է:

Իմացեք ավելին cesinfo.byu.edu կայքում:

ԲՅՀ–HAWAII (ՀԱՎԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ԲՐԻԳԱՄ ՅԱՆԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ)

Կենտրոնանալով Օվկիանիայից և Ասիական երկրներից եկած ուսանողների վրա՝ ԲՅՀ–Hawaii-ն ուսանողներին նախապատրաստում է դառնալ աշխարհում միջմշակութային խաղաղության և միասնության օրինակներ՝ Հիսուս Քրիստոսի ուսմունքներով ապրելու միջոցով: ԲՅՀ-Hawaii-ի շրջանավարտները պատրաստվում են ողջ կյանքի ընթացքում ծառայության համար: Նրանք դրսևորում են մտածողության հմտություններ և ծառայող-առաջնորդի բնավորություն:

- Ուսանողները պլանավորում են իրենց ուրույն ակադեմիական ուղիները՝ ընտրելով մեկ հիմնական և երկու լրացուցիչ մասնագիտություն կամ վկայականներ ուսման տարբեր ոլորտներում:

Իմացեք ավելին cesinfo.byu.edu կայքում:

ԲՅՀ–PATHWAY WORLDWIDE

ԲՅՀ–Pathway Worldwide կրոնի ինստիտիտուտը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին ստանալ համալսարանական կրթություն:

Այն ուսանողները, որոնց անհրաժեշտ է առցանց կրթության ճկունությունը, որոնք ցանկանում են ամրացնել իրենց ակադեմիական վստահությունը կամ որոնց ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ՝ պարզելու, թե ինչ անել ավագ կամ միջնակարգ դպրոցից հետո, կարող են օգտվել ԲՅՀ–Pathway Worldwide կրոնի ինստիտուտի առավելություններից:

- ԲՅՀ–Pathway Worldwide կրոնի ինստիտուտը սպասարկում է ուսանողներին ավելի քան 180 երկրներում:
- Դասընթացներն ամբողջությամբ առցանց են և ուսման գները զգալիորեն ցածր են, քան մյուս դպրոցներում:
- Ուսանողները կարող են ձեռք բերել համապատասխան վկայականներ և ստանալ առցանց կրթության կրթական աստիճաններ ԲՅՀ–Idaho և Ensign քոլեջի միջոցով:
- Յուրաքանչյուր առաջարկվող վկայական ստանալու համար անհրաժեշտ է մեկ տարի կամ ավելի քիչ ժամանակ:

Իմացեք ավելին cesinfo.byu.edu կայքում:

ENSIGN ՔՈԼԵՋ

Կենտրոնանալով հիմնականում Յուտայի նահանգի ուսանողների վրա՝ Ensign քոլեջը կրթում և զարգացնում է Հիսուս Քրիստոսի ընդունակ և վստահելի աշակերտներ:

Մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ուղղված ուսումնական ծրագիրը երաշխավորում է, որ ուսանողները ձեռք կբերեն փորձառություն, որը կնախապատրաստի իրենց մրցակցային աշխատավարձ ստանալ մեկից չորս տարվա ընթացքում: Հոգևոր առումով սնուցվող միջավայրը լրացնում է խորացված ուսումնասիրությունը դասարանում:

- Բոլոր ցանկացողները կարող են դիմել:
- Կարող են կիրառվել ավելի քան 25 տարբեր վկայականներ՝ կրտսեր մասնագետի կամ բակալավրի աստիճան շնորհելու համար:
- Առցանց վկայականները և աստիճանները հնարավոր է ստանալ ԲՅՀ–Pathway Worldwide-ի միջոցով:
- Ուսանողական կազմը բազմազան է:

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ cesinfo.byu.edu ԿԱՅՔՈՒՄ:ԿՐՈՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Ինստիտուտը մի միջավայր է չափահաս երիտասարդների համար՝ դպրոցում կամ դպրոցից դուրս, որտեղ նրանք հավաքվում են ընկերների հետ, որոնք կիսում են հավերժական ճշմարտություններով ապրելու իրենց ցանկությունը՝ բախվելով առօրյա կյանքի երկրային իրողություններին: Ինստիտուտի նպատակն է՝ օգնել երիտասարդներին բացահայտել և կիրառել Հիսուս Քրիստոսին ավելի շատ նմանվելու գործնական ուղիները:

Ուսանողները ներառվում են ինստիտուտում հավատքի իրենց ճանապարհի այն կետում, որտեղ գտնվում են: Դա մի վայր է, որտեղ նրանք կզգան.

- Քրիստոսակենտրոն ուսումնական ծրագիր՝ հիմնված սուրբ գրությունների և մարգարեական ուսմունքների վրա:
- Հոգևոր և գործնական կյանքի իրավիճակներում կողմնորոշվելու վերաբերյալ փորձառական հետազոտություն:
- Հարգանքի, փոխըմբռնման և ապահով վայր՝ շփվելու, հարցեր տալու և նոր հեռանկարներ ձեռք բերելու համար:
- Առցանց և առկա ուսուցում, սեմինարներ և ինտերակտիվ քննարկումներ:

Իմացեք ավելին institute .ChurchofJesusChrist.org կայքում:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_582_handout-2